



**MILLENNIUM  
CHALLENGE  
CORPORATION**  
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՉԱՐԱՍՅԱԿԻ  
ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐ  
ՀԻՄՆԱԳՐԱՎ-ՀԱՅԱՍՏԱՆ**

9 նոյեմբերի, 2007թ.

Մամլո հաղորդագրություն

## **Մեկնարկեցին ՀՄՀ-Հայաստանի ճանապարհաշինական աշխատանքները**

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստանը այսօր հայտարարեց ճանապարհաշինության ենթածրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի մասին: Մեկնարկն ազդարարվեց հանդիսավոր արարողությամբ, որի առանցքը ճանապարհաշինական աշխատանքների սկզբնակետում՝ Արագածոտնի մարզի Գետափ գյուղի մոտ տեղադրված ցուցատախտակի բացման արարողությունն էր, որին ներկա էին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը և աշխատանքային այցով Հայաստանում գտնվող Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Դարիուս Մանսը:

Առաջին ճանապարհահատվածը, որ կվերականգնվի ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում, Հ17 Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի 24,5 կիլոմետր երկարությամբ հատվածն է, որի շինարարությունն իրականացնում է «Դորոժնիկ» ՍՊԸ-ն: Պայմանագրի համաձայն շինարարությունը նախատեսվում է ավարտել 2008թ.-ի դեկտեմբերի 15-ին:

Ընդհանուր առմամբ, ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրով նախատեսում է 67.1 միլիոն ԱՄՆ դոլար հատկացնել մինչև 943 կմ գյուղական ճանապարհների վերականգնման համար, ինչը կազմում է Հայաստանի առաջարկվող կենսական նշանակության ճանապարհային ցանցի ավելի քան մեկ երրորդը: Դա կապահովի, որպեսզի յուրաքանչյուր գյուղական համայնք ելքի հնարավորություն ունենա դեպի շուկաներ, ծառայություններ և հիմնական ճանապարհային ցանց: Ըստ Համաձայնագրի ՀՀ կառավարությունը պետք է ապահովի լրացուցիչ ռեսուրսներ ճանապարհային ցանցի պահպանման համար:

2006թ. մարտի 27-ին կնքված ու սեպտեմբերի 29-ին գործողության մեջ մտած Համաձայնագրով նախատեսվում է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ցուցանիշների կայուն ու տևական աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գյուղական ճանապարհներում, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, գյուղացիական տնտեսություններին ու ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը շոշափելի արդյունքներ կապահովի շուրջ 750000 հոգու կամ գյուղական բնակչության 75%-ի համար: Նախատեսվում է, որ այն կկրճատի աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում ու կավելացնի տարեկան եկամուտները:

Համաձայնագիրը նախատեսում է նաև 146 միլիոն ԱՄՆ դոլարի առանձին բաղադրիչ, որի նպատակն է բարձրացնել մոտ 250000 ֆերմերային տնտեսությունների (որոնցից 34%-ը գլխավորում են կանայք) արտադրողականությունը՝ բարելավելով ջրամատակարարումը, բերքատվությունը, խթանելով բարձրարժեք բերքի մշակումը եւ մեծացնելով գյուղատնտեսական ոլորտի մրցունակությունը:

###

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) ԱՄՆ պետական կազմակերպություն է, որն աշխատում է աշխարհի ամենաաղքատ երկրների հետ՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ օժանդակությունն առավել արդյունավետ է, երբ տնտեսական աճի խթանումն ու ծայրահեղ աղքատության վերացումը իրականացվում է լավ կառավարման, տնտեսական ազատությունների ու մարդկային կապիտալի ոլորտում ներդրումների ամրապնդման ճանապարհով:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել ԱՄՆ ժողովրդի մեծահոգության շնորհիվ: